

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)**1. Իրավական դաշտ**

«ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ՝ ապահովագրական ընկերություն) ստեղծվել է հիմնադիրների (բաժնետերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն 22 նոյեմբերի 2008թ. կնքված հիմնադիր պայմանագրի: Ընկերության գործունեության իրականացման և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ ք. Երևան Գեղատան 2/7: Ընկերությունը հանդիսանում է շահույթի նպատակ հետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը կազմում է 570 մլն (հինգ հարյուր յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ: Այն բաժանված է երկու մասի՝ «ԷՍՋԻԱՅ-Ինվեստ» ՍՊԸ (50%) և «Սի Այ Էս Իբուիթի Փարթներս Լիմիթեդ» ՍՊԸ (50%) :

Ընկերության կանոնադրական կապիտալը 26.12.2009 թ-ին համալրվել է 500 մլն (հինգ հարյուր միլիոն) դրամով և գրանցում թ ստացել ՀՀ ԿԲ-ում 18.01.2010 թ.: Այն բաժանված է երկու մասի՝ «Պոլիգրաֆիա» ՓԲԸ (50%) և «Սի Այ Էս Իբուիթի Փարթներս Լիմիթեդ» ՍՊԸ (50%) :

«ՌԵՍՈ» ԱՓԲԸ հիմնական տնտեսական գործունեությունը ոչ կյանքի ապահովագրությունն է: Իր հիմնական տնտեսական գործունեության կազմակերպման և կարգավորման նպատակով Ընկերությունը առաջնորդվում է «Ապահովագրության և Ապահովագրական Գործունեության Մասին» ՀՀ օրենքի, ապահովագրական ոլորտը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերի և Ընկերության կողմից ընդունված ներքին իրավական ակտերի պահանջներով:

Ընկերությունը 10.11.2008թ. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից ստացել է ոչ կյանքի ապահովագրության իրականացման թիվ ԱՊՈ 0010 լիցենզիա՝ հետևյալ ապահովագրության դասերի գծով՝

- *Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն,*
- *Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն,*
- *Դժբախտ պատահարներից ապահովագրություն,*
- *Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,*
- *Գույքին հասցված այլ վնասների ապահովագրություն,*
- *Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,*
- *Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն*
- *Ֆինանսական վնասների ապահովագրություն*
- *Առողջության ապահովագրություն*
- *Աջակցության ապահովագրություն*

Ընկերությունը 31.12.2009 թ. դրությամբ ունեցել է 20 աշխատակից, 86 պայմանագրային աշխատող:

Կորպորատիվ կառավարում

Ընկերությունում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքներ: Ընկերության խորհուրդը բաղկացած է հինգ անդամներից: Հստակորեն տարանջատված են Ընկերության խորհրդի, գործադիր մարմնի, ներքին աուդիտի գործառույթներն ու պարտականությունները:

2. Հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվում է՝ հիմք ընդունելով ապահովագրական համակարգի հաշվապահական հաշվառումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջները և հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվապահական հաշվառման գործընթացների ներդրման և կազմակերպման յուրաքանչյուր առանձին ուղղվածությամբ հիմնվում է օրենսդրությամբ սահմանված և հաշվառման նորմատիվային կարգավորման իրավական համակարգում ամրագրված կամ իրավական ակտերով թույլատրված մեթոդների և եղանակների վրա:

ա) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելիս կիրառվել է Ընկերության կողմից որդեգրված և ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ հաշվի առնելով ՀՀՀՀՄ 1-ով ամրագրված սկզբունքները:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: Տնտեսական գործառնությունները ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ դրամական միջոցների շարժը ներկայացնող հաշվետվության, ներկայացվել են հաշվեգրման սկզբունքի հիման վրա: Դրամական միջոցների շարժի վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» ՀՀՀՀՄ 7-ի սկզբունքների հիման վրա:

Ֆինանսական հաշվետվությունների արժեքների ներկայացման արժույթ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ դրամը: Արժեքների թվաբանական մեծությունները ներկայացվել են հազար դրամներով: Արտարժույթով ներկայացված ակտիվները և պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքները:

Ֆինանսական հաշվետվություններում ակտիվները և պարտավորությունները հաշվանցվել և գուտ գումարը ներկայացվել է հաշվապահական հաշվեկշռում, երբ եղել է ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադրություն կամ հաշվարկն իրականացվել է գուտ հիմունքով կամ իրացվել է ակտիվը և մարվել պարտավորությունը միաժամանակ:

Հաշվանցումները ֆինանսական հաշվետվություններում կիրառվել են հետևյալ դեպքերում՝

1) ակտիվների օտարումից, վաճառքից ստացված հասույթներից հանվում է ակտիվի հաշվեկշռային արժեքը և օտարման հետ կապված համապատասխան ծախսերը՝ ցույց տալով գուտ շահույթ կամ վնաս (վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարում, հիմնական միջոցների օտարում),

2) արտարժույթային ակտիվների վերագնահատումից առաջացած շահույթները և վնասները ցույց են տրվում գուտ հիմունքով:

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Ընկերության կողմից պահպանվել են անընդհատության, ներկայացման հետևողականության, էականության, համադրելիության սկզբունքները:

բ) Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

«Հասույթ» ՀՀՀՀՄ 18-ի սկզբունքների հիման վրա են ներկայացվել ֆինանսական հաշվետվություններում Ընկերության եկամուտների և ծախսերի հաշվառումը: Եկամուտները և ծախսերը ներկայացվել են հաշվեգրման սկզբունքով: Ընդ որում պահպանվել է եկամուտների և ծախսերի ճանաչման համապատասխանությունը: Մասնավորապես, Ընկերության կողմից մատուցված ծառայությունների դիմաց հասույթի և այդ ծառայությունների մատուցման համար իրականացված ծախսումների հաշվեգրումը կատարվել են միաժամանակ այն ժամանակաշրջանի ընթացքում, որին դրանք վերաբերվում են:

Ընկերությունն իր հիմնական գործունեությունից ստացված եկամտի հիմնավորող փաստաթուղթ է համարում ապահովագրության պայմանագիրը (վկայագիրը): Ապահովագրության պայմանագրի (վկայագրի) հետագա փոփոխություններն իրականացվում են ապահովագրության պայմանագրի (վկայագրի) անբաժանելի մաս կազմող համաձայնագրերի (լրացումների) միջոցով:

գ) Արտարժույթային փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը

Ընկերության կողմից արտարժույթային փոխարժեքային տարբերությունները հաշվառվել և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՀՀՄ 21-ի սկզբունքների հիման վրա:

Արտարժույթով գործարքը սկզբնական ճանաչման պահին գրանցվում է ՀՀ դրամով՝ արտարժույթի նկատմամբ կիրառելով ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված գործարքի օրվա միջին փոխարժեքը:

Հաշվապահական հաշվեկշիռը կազմելու ամսաթվի դրությամբ՝

արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը,

դ) Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Ընկերության կողմից շահութահարկը հաշվառվում է և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է «Շահութահարկ» ՀՀՀՀՄ 12-ի սկզբունքների հիման վրա:

Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերվում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված միավորներին:

ե) Ֆինանսական գործիքների ճանաչումը և չափումը

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման ժամանակ չափվել են իրենց սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրա դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը, ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները:

զ) Դրամական միջոցներ ու դրանց համարժեքներ

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, ՀՀ ռեզիդենտ բանկերում ներդրված դրամական միջոցները:

է) Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Ընկերության հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Մաշվածությունը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձնման ամսաթվից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հետևյալներն են՝

<i>տնտեսական գույք</i>	<i>1 տարի</i>
<i>հաշվողական և համակարգչային սարքավորումներ</i>	<i>3-5 տարի</i>
<i>այլ հիմնական միջոցներ</i>	<i>3-5 տարի</i>
<i>մինչև հիսուն հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ</i>	<i>1 տարի</i>

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունը կամ մաշվածության հաշվարկման օգտագործվող դրույքաչափերը հետևյալներն են՝

<i>համակարգչային ծրագրեր</i>	<i>10 տարի</i>
<i>լիցենզիաներ և վստահագրեր</i>	<i>1 տարի</i>
<i>այլ ոչ նյութական ակտիվներ</i>	<i>10 տարի</i>

Ծանոթագրություն 3.

Ընկերության դրամական միջոցները ամբողջությամբ գտնվում են ՀՀ ռեզիդենտ բանկերում բացված բանկային հաշիվներում՝ 121205.0 հազ. դրամ, որոնց գծով պահուստը կազմում է 1212.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 5. «Ընթացիկ ավանդներ»: Ծանոթագրություն 5-ի տարրերն են՝

Ընկերության ընթացիկ ավանդները ամբողջությամբ գտնվում են ՀՀ ռեզիդենտ բանկերում բացված բանկային հաշիվներում՝ 984372.0 հազ. դրամ

Ավանդների հնարավոր կորուստների պահուստ՝ 9843.0 հազ. դրամ

Ծանոթագրություն 6. «Ընթացիկ փոխատվություններ»:

Ընկերությունը ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ունի տրված ընթացիկ փոխատվություն 1277.0 հազ. դրամ:

Ֆիզիկական անձանց տրված ընթացիկ փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստը կազմում է 12.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 10. «Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ»: Ծանոթագրություն 10-ի տարրն է՝ 26735.0 հազ. դրամը՝ կանխավճար ռեզիդենտ մատակարարներին

Տվյալ ակտիվների գծով դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստը կազմում է 267.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 11. «Ստացվելիք տոկոսներ»: Ծանոթագրություն 11-ի տարրերն են՝

Ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների գծով ստացվելիք տոկոսները 31.12.09թ. դրությամբ կազմում են 6602.0 հազ. դրամ:

Տրամադրված փոխառությունների գծով 3.0 հազ դրամ:

Ծանոթագրություն 13. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ
ա. Հիմնական միջոցներ

	Համակարգ-չային և կապի միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	-----	-----	-----
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին			
Ավելացում			
Օտարում			
Արժեզրկում			
Վերագնահատում			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին			
Ավելացում	4855	1852	6707
Օտարում		-13	-13
Վերագնահատում*			
Արժեզրկում			
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում			
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	4855	1839	6694
Կուտակված մաշվածություն	-----	-----	-----
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին			
Ավելացում			
Օտարում			
Արժեզրկում			
Վերագնահատում			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին			

Ավելացում	366	359	725
Օտարում		-3	-3
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում			
Արժեզրկում			
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	366	356	722
Չուտ հաշվեկշռային արժեք			-----
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	4489	1480	5969
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին			

բ. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք	-----	-----	-----
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին			
Ավելացում			
Օտարում			
Արժեզրկում			
Վերագնահատում			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին		1250	1250
Ավելացում	198		198
Օտարում			
Վերագնահատում*			
Արժեզրկում			
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում			
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	198	2500	2698
Կուտակված մաշվածություն	-----	-----	-----
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին			
Ավելացում			
Օտարում			
Արժեզրկում			

Վերազնահատում			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին		174	174
Ավելացում	8	1004	1012
Օտարում			
Վերազնահատումից մաշվածության ճշգրտում			
Արժեզրկում			
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	8	1178	1186
Չուտ հաշվեկշռային արժեք			
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	190	1318	1508
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին		1076	1076

Ծանոթագրություն 26.

Չվաստակաժ ապահովագրավճարների պահուստը ձևավորվել է միայն ռեզիդենտ ֆիզիկական անձանց գծով, որը կազմել է 82288.0 հազ. դրամ:

Վերաապահովագրողի մասը չվաստակաժ ապահովագրավճարների պահուստում կազմում է 822.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 30.

Կրեդիտորական պարտքերը հարկերի գծով կազմում են 5707.0 հազ. դրամ, որից 2068.0 հազ. դրամը ոչ ռեզիդենտի շահութահարկ է, 3639.0 հազ. դրամը՝ եկամտահարկն է:

Կրեդիտորական պարտքեր սոցիալական ապահովության վճարումների գծով կազմում են 2936.0 հազ. դրամ, որից 734.0 հազ. դրամը՝ աշխատակիցներից պահված սոց. վճարը, իսկ 2202.0 հազ. դրամը՝ գործատուի կողմից վճարվելիք պարտադիր սոց.վճարները:

Ծանոթագրություն 31.

Տվյալ հոդվածում արտացոլված են ապահովագրության գծով ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ստացված կանխավճարները՝ 1787.0 հազ. դրամ, իսկ իրավաբանական անձանցից ստացված կանխավճարները՝ 1678.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 37.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1070.0 մլն. դրամ, որը բաղկացած է 1070 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրի անվանական արժեքը 1 մլն. դրամ, որն ամբողջությամբ տեղաբաշխված է և վճարված:

Ծանոթագրություն 41.

Չբաշխված վնասը կազմում է 86334.0 հազ. դրամ, որից 288.0 հազ. դրամը

նախորդ տարվա վնասն է, 86046.0 հազ. դրամը՝ ընթացիկ տարվա վնաս:

Ծանոթագրություն 43.

Ոչ կյանքի ապահովագրության գծով ռեզիդենտ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների գծով եկամուտները կազմում են 200695.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 75.

Չվաստակած ապահովագրավճարների պահուստների ձևավորման ծախսերը ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով կազմում են 82288.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 79.

Տոկոսային եկամուտները ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդներից կազմում են 19624.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 87.

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ եկամուտները կազմում են 23170.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 88.

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին զուտ հատկացումները կազմում են 8736.0 հազ. դրամ, իսկ պահուսի հակադարձումները՝ 11040.0 հազ. դրամ:

Ծանոթագրություն 89.

95788.0 հազ. դրամ գումարը իրենից ներկայացնում է ծախս անձնակազմի գծով, 6848.0 հազ. դրամը՝ կառավարչական ծախսեր:

Ծանոթագրություն 90.

Հասարակական կապերի գծով ծախսերը կազմում են՝ 2479.0 հազ. դրամ

Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը՝ 1519.0 հազ. դրամ

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսերը՝ 1558.0 հազ. դրամ

Այլ ծախսեր՝ 1292.0 հազ. դրամ

Ծանոթագրություն 93 Արտահաշվեկշռային հաշիվներ

Ցուցանիշի անվանումը	Նախորդ տարվա վերջի մնացորդը	հազ. դրամ
		Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
1	2	3
Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ		17000
Շահագործման մեջ գտնվող փոքրարժեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ		1404
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ		119705566